Ուժի մեջ է 2020թ. հունվարի 31-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

գլխավոր գործադիր տնօրեն՝

Հ. Անդրեասյան _____

30 հունվարի 2020թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքները, մատուցվող վարկային գործառնությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի կամ պայմանագրի ստորագրումը հաստատում է Սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել Սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար Սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

9. Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կոնտրագենտների և/կամ Բանկի հաճախորդների հետ կնքված պայմանագրերով որոշակի շրջանակի կամ առանձին ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար կարող են սահմանվել Սակագներից տարբերվող այլ սակագներ:

10. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխատանքային օրերին[1]՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-18:00, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- մասնաճյուղերի կողմից ծառայությունների դիմաց վճարումների ընդունում և հաշվարկադրամարկղային սպասարկում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-16:30-ը,
- հեռահար եղանակով, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) միջոցով ծառայությունների մատուցում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:00-18:00,

ինչպես նաև, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում, Բանկի ներքին իրավական ակտերում կամ www.acba.am Բանկի պաշտոնական կայքում:

[1] Աշխատանքային օրեր՝ երկուշաբթիից ուրբաթ օրերը (բացառությամբ այն օրերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն ոչ աշխատանքային օրեր), ինչպես նաև այն օրերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն աշխատանքային օրեր:

ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ ԵՎ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ	
1. Ստանդարտ գյուղատնտեսական վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և ՌԴ ռուբլով՝	
- ՀՀ դրամով	11.9-15.9% տարեկան տոկոսադրույքով
- ԱՄՆ դոլարով	10.9-13.9% տարեկան տոկոսադրույքով
- ՌԴ ռուբլով	14-20% տարեկան տոկոսադրույքով
Վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միանվագ միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով:	
2. Պարզ գյուղատնտեսական վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և ՌԴ ռուբլով՝	
- ՀՀ դրամով	14.9-16.9% տարեկան տոկոսադրույքով
- ԱՄՆ դոլարով	12.9-14.9% տարեկան տոկոսադրույքով
- ՌԴ ռուբլով	14-20% տարեկան տոկոսադրույքով
Վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միանվագ միջնորդավճար՝ վարկի գումարի 2.5%-ի չափով:	
3. Էքսպրես գյուղատնտեսական վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և ՌԴ ռուբլով՝	
- ՀՀ դրամով	15.9-17.9% տարեկան տոկոսադրույքով
- ԱՄՆ դոլարով	13.9-15.9% տարեկան տոկոսադրույքով
- ՌԴ ռուբլով	14-20% տարեկան տոկոսադրույքով
Վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միանվագ միջնորդավճար՝ վարկի գումարի 2.5%-ի չափով:	
4.Գյուղատնտեսական լոմբարդային վարկեր՝	
- ՀՀ դրամով և ՌԴ ռուբլով	
- 3 ամիս ժամկետով	12.9% տարեկան տոկոսադրույքով
- 6 ամիս ժամկետով	15.9% տարեկան տոկոսադրույքով
- 12-ից 18 ամիս ժամկետով	17.9% տարեկան տոկոսադրույքով
- 19-ից 24 ամիս ժամկետով	18.9% տարեկան տոկոսադրույքով
- ԱՄՆ դոլարով	
- 3 ամիս ժամկետով	9.9% տարեկան տոկոսադրույքով
- 6 ամիս ժամկետով	12.9% տարեկան տոկոսադրույքով
- 12-ից 18 ամիս ժամկետով	13.9% տարեկան տոկոսադրույքով
- 19-ից 24 ամիս ժամկետով	14.9% տարեկան տոկոսադրույքով
Վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1.4%-ի չափով:	

Մինչև 2018թ. ապրիլի 13-ը (ներառյալ) տրամադրված Գյուղատնտեսական լոմբարդային վարկերի ավտոմատ երկարաձգումը կատարվում է գործող պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքով: 2018թ. ապրիլի 16-ից տրամադրված Գյուղատնտեսական լոմբարդային վարկերի ավտոմատ երկարաձգումը կատարվում է պայմանագրով սահմանված ժամկետով և Սակագներով սահմանված Գյուղատնտեսական լոմբարդային վարկերի տարեկան տոկոսադրույքով:	
Գյուղատնտեսական լոմբարդային վարկերի ավտոմատ երկարաձգման միջնորդավճար	վարկի մնացորդի 1.4%-ի չափով
5. Գյուղատնտեսական վարկային գծեր՝	
- ՀՀ դրամով	17.9% տարեկան տոկոսադրույքով
- ԱՄՆ դոլարով	15.9% տարեկան տոկոսադրույքով
6. «Արդյունավետ գյուղատնտեսություն» վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով	0-8% տարեկան տոկոսադրույքով
Վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 3%-ի չափով:	
7. «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրերի շրջանակներում՝ Ստանդարտ գյուղատնտեսական, Պարզ գյուղատնտեսական վարկերը, Բիզնես և Էքսպրես բիզնես վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով	12% տարեկան տոկոսադրույքով
7.1. «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը դադարեցնելու դեպքում վարկի տարեկան տոկոսադրույք	համաձայն համապատասխան վարկատեսակի սակագնի
8. Ոսկու գրավով ապահովված (Լոմբարդային) վարկերը: Ոսկու գրավով ապահովված (Լոմբարդային) վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով:	
8.1. Միանվագ միջնորդավճարի գանձմամբ վարկեր	
- 3 ամիս ժամկետով	12.9% տարեկան տոկոսադրույքով
- 6 ամիս ժամկետով	15.9% տարեկան տոկոսադրույքով
- 12-ից 18 ամիս ժամկետով	17.9% տարեկան տոկոսադրույքով
- 19-ից 24 ամիս ժամկետով	18.9% տարեկան տոկոսադրույքով
Վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար վարկի պայմանագրային գումարի 1.4%-ի չափով:	
8.2. Ամսական միջնորդավճարի գանձմամբ վարկեր	
Ամսական պարբերականությամբ մարումների դեպքում	9.9% տարեկան տոկոսադրույքով
Եռամսյակային պարբերականությամբ մարումների դեպքում	12.9% տարեկան տոկոսադրույքով
Վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով հաճախորդից գանձվում է ամսական սպասարկման միջնորդավճար վարկի պայմանագրային գումարի 0.5%-ի չափով՝ ամսական կամ եռամսյակային պարբերականությամբ	
8.3. Ոսկու գրավով ապահովված (Լոմբարդային) վարկերի երկարաձգում	

8.3.1. Մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը տրամադրված միանվագ միջնորդավճարի գանձմամբ Ոսկու գրավով ապահովված (Լոմբարդային) վարկերի ավտոմատ երկարաձգումը կատարվում է գործող պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքով և հաճախորդից գանձվում է վարկի մնացորդի 1%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 1 000 ՀՀ դրամ միջնորդավճար: 8.3.2. 2018թ. հունվարի 8-ից տրամադրված միանվագ միջնորդավճարի գանձմամբ Ոսկու գրավով ապահովված (Լոմբարդային) վարկերի ավտոմատ երկարաձգումը կատարվում է պայմանագրով սահմանված ժամկետով և ստորև սահմանված տարեկան տոկոսադրույքով. - մինչև 3 ամիս (ներառյալ) ժամկետով վարկերի դեպքում՝ 12.9% տարեկան տոկոսադրույքով, - 4-ից 6 ամիս (ներառյալ) ժամկետով վարկերի դեպքում՝ 15.9% տարեկան տոկոսադրույքով, - 7-ից 18 ամիս (ներառյալ) ժամկետով վարկերի դեպքում՝ 17.9% տարեկան տոկոսադրույքով, - 19-ից 24 ամիս (ներառյալ) ժամկետով վարկերի դեպքում՝ 18.9% տարեկան տոկոսադրույքով: Ավտոմատ երկարաձգման դեպքում հաճախորդից գանձվում է միանվագ միջնորդավճար երկարաձգման պահին առկա վարկի մնացորդի 1.4%-ի չափով: 8.3.3. Միանվագ միջնորդավճարի գանձմամբ Ոսկու գրավով ապահովված (Լոմբարդային) վարկերի երկարաձգումը ոչ ավտոմատ եղանակով իրականացվում է կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետով և 8.1.կետում նշված սակագներով, բացի միանվագ միջնորդավճարից, որը հաճախորդից գանձվում է երկարաձգման պահին առկա վարկի մնացորդի 1.4%-ի չափով: 8.3.4. Ամսական և եռամսյակային միջնորդավճարի գանձմամբ Ոսկու գրավով ապահովված (Լոմբարդային) վարկերի ավտոմատ եղանակով երկարաձգումը կատարվում է պայմանագրով սահմանված ժամկետով և 8.2. կետում նշված սակագներով, բացի ամսական սպասարկման միջնորդավճարից, որը հաճախորդից գանձվում է երկարաձգման պահին առկա մնացորդային գումարի նկատմամբ ամսական 0.5%-ի չափով: Ամսական և եռամսյակային միջնորդավճարի գանձմամբ Ոսկու գրավով ապահովված (Լոմբարդային) վարկերի ոչ ավտոմատ եղանակով երկարաձգումը կատարվում է կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետով և 8.2. կետում նշված սակագներով, բացի ամսական սպասարկման միջնորդավճարից, որը հաճախորդից գանձվում է երկարաձգման պահին առկա մնացորդային գումարի նկատմամբ ամսական 0.5%-ի չափով:	
9. Ապառիկ վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	18% տարեկան տոկոսադրույքով[2]
Ապառիկ վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման ժամանակ հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 2%-ի չափով.	
10. «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի «Կենցաղային տեխնիկայի ձեռքբերման վարկեր» ծրագրի շրջանակներում վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝ (սույն ծրագրի շրջանակներում վարկերը տրամադրվում են ՀՀ Պաշտպանության Նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ոստիկանության աշխատակիցներին)	12% տարեկան տոկոսադրույքով
«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի «Կենցաղային տեխնիկայի ձեռքբերման վարկեր» ծրագրի շրջանակներում վարկի տրամադրման ժամանակ վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով միջնորդավճար չի գանձվում	
11. Ուսման վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	
- 6 ամիս ժամկետով	14.5% տարեկան տոկոսադրույքով
- 13 ամիս ժամկետով	18% տարեկան տոկոսադրույքով
Ուսման վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 2% չափով	
12. «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի «Ուսանողական վարկեր» ծրագրի շրջանակներում վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	9% տարեկան տոկոսադրույքով

[2] Ապառիկ վարկերի տրամադրման շրջանակներում Բանկի հետ համագործակցող իրավաբանական անձանց/անհատ ձեռնարկատերերի հետ կնքված համագործակցության պայմանագրի հիման վրա հնարավոր է ապառիկ վարկը տրամադրել 0% տարեկան տոկոսադրույքով:

«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի «Ուսանողական վարկեր» ծրագրի շրջանակներում վարկի տրամադրման ժամանակ վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով միջնորդավճար չի գանձվում	
«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի «Ուսանողական վարկեր» ծրագրի շրջանակներում վարկառուները կարող են ձեռք բերել Visa Student տեսակի քարտ, եթե չունեն Ուսման վարկ պրոդուկտի շրջանակներում տրամադրված գործող Visa Student տեսակի քարտ	
13. Առանց գրավի սպառողական այլ վարկեր	
- 9-ից 12 ամիս ժամկետով	12.9-13.9% տարեկան տոկոսադրույքով
- 13-ից 24 ամիս ժամկետով	14.9-15.9% տարեկան տոկոսադրույքով
- 25-ից 60 ամիս ժամկետով	16.9-18.5% տարեկան տոկոսադրույքով
Վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով հաճախորդից գանձվում է վարկի գումարի 3%-ի չափով միջնորդավճար:	
Առանձին դեպքերում վարկունակության գնահատման արդյունքում Առանց գրավի սպառողական այլ վարկերի տոկոսադրույքը կարող է սահմանվել տվյալ ժամանակահատվածին համապատասխան առավելագույն տոկոսադրույքից մինչև 2.5% տոկոսային կետով բարձր, բայց ոչ ավել քան 20%:	
14. Գրավով ապահովված սպառողական այլ վարկեր	
- 12 և ավելի ամիս ժամկետով	16.5-18.5% տարեկան տոկոսադրույքով
Գրավով ապահովված սպառողական այլ վարկերի տրամադրման դեպքում վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով:	
15. Բիզնես վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով և արտարժույթով՝	
- ՀՀ դրամով	12-17% տարեկան տոկոսադրույքով
- ԱՄՆ դոլարով	9-13% տարեկան տոկոսադրույքով
- եվրոյով	6.5-11% տարեկան տոկոսադրույքով
- ՌԴ ռուբլով	10-18% տարեկան տոկոսադրույքով
Մինչև 12 ամիս ժամկետով Բիզնես վարկերը կարող են տրամադրվել՝	
- ՀՀ դրամով	9.5-12.5% տարեկան տոկոսադրույքով
- ԱՄՆ դոլարով	6.5-9.5% տարեկան տոկոսադրույքով
- եվրոյով	5.5-8.5% տարեկան տոկոսադրույքով
- ՌԴ ռուբլով	9-12% տարեկան տոկոսադրույքով
Բիզնես վարկերի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով:	
16. Էքսպրես բիզնես վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով և արտարժույթով՝	
Մինչև 12 ամիս ժամկետով Էքսպրես բիզնես վարկերը կարող են տրամադրվել՝	
- ՀՀ դրամով	11.5-14.5% տարեկան տոկոսադրույքով
- ԱՄՆ դոլարով	11-14% տարեկան տոկոսադրույքով
- եվրոյով	9-12% տարեկան տոկոսադրույքով
- ՌԴ ռուբլով	12-14.5% տարեկան տոկոսադրույքով

13-48 ամիս ժամկետով Էքսպրես բիզնես վարկերը կարող են տրամադրվել՝	
- ՀՀ դրամով	15-18% տարեկան տոկոսադրույքով
- արտարժույթով	13-16% տարեկան տոկոսադրույքով
Էքսպրես բիզնես վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1.9%-ի չափով:	
17. Բիզնես վարկային գծերը տրամադրվում են ՀՀ դրամով և արտարժույթով՝	
Բիզնես վարկային գծի օգտագործված մասի տոկոսադրույք՝	
- ՀՀ դրամով	13-17% տարեկան
- ԱՄՆ դոլարով	9-15% տարեկան
- եվրոյով	7.5-12% տարեկան
- ՌԴ ռուբլով	10-18% տարեկան
Բիզնես վարկային գծի չօգտագործված մասի տոկոսադրույք՝	
- ՀՀ դրամով և արտարժույթով	0-3% տարեկան
Բիզնես վարկային գծի հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկային գծի բացման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկային գծի առավելագույն սահմանաչափի 1%-ի չափով:	
18. Արտահանման և ներմուծման վարկային գծերը տրամադրվում են արտարժույթով.	
Արտահանման և ներմուծման վարկային գծի օգտագործված մասի տոկոսադրույք՝	
- ԱՄՆ դոլար՝	6-9% տարեկան
- Եվրո՝	4.5-6.5% տարեկան
Արտահանման և ներմուծման վարկային գծի չօգտագործված մասի տոկոսադրույք՝	
- բոլոր արժույթներով՝	0% տարեկան
Արտահանման և ներմուծման վարկային գծի հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկային գծի բացման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկային գծի առավելագույն սահմանաչափի 0.4-0.7%-ի չափով:	
Արտահանման և ներմուծման վարկային գծերը վարկի վերաձևակերպման դեպքում տրամադրվում են արտարժույթով՝	
- ԱՄՆ դոլար՝	7-10% տարեկան տոկոսադրույքով
- Եվրո՝	5.5-8% տարեկան տոկոսադրույքով
19. Օվերդրաֆտները տրամադրվում են ՀՀ դրամով և արտարժույթով՝	
Օվերդրաֆտի օգտագործված մասի տոկոսադրույք՝	
- ՀՀ դրամով	15-19% տարեկան
- արտարժույթով	10-18% տարեկան
Օվերդրաֆտի հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով օվերդրաֆտի բացման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ օվերդրաֆտի առավելագույն սահմանաչափի 1%-ի չափով:	
20. Ամբողջությամբ դրամական միջոցներով ապահովված (ընթացիկ հաշվին սառեցված կամ որպես ժամկետային ավանդ ներդրված) մինչև 24 ամիս ժամկետով Բիզնես վարկերը տրամադրվում են գործող Բիզնես ավանդի՝ վարկի ժամկետին և արժույթին համապատասխանող տարեկան տոկոսադրույք +5%, իսկ Բիզնես վարկային գծերը և Օվերդրաֆտները՝ +6%, սակայն ՌԴ ռուբլով վարկերի դեպքում ոչ պակաս, քան 14%:[3]	
21. Անշարժ գույքի վերանորոգման (վերակառուցման) և Անշարժ գույքի ձեռքբերման (գնման) նպատակով հիփոթեքային վարկեր:	
21.1. Անշարժ գույքի վերանորոգման (վերակառուցման) հիփոթեքային վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով կամ արտարժույթով՝	
21.1.1. Գրավով ապահովված (մինչև 84 ամիս ժամկետով)՝	

[3] Հաշվարկին մասնակցում են Բիզնես ավանդի «Տոկոսագումարների ամսական վճարում կամ կապիտալացում» տոկոսագումարների վճարման եղանակներին համապատասխանող տարեկան տոկոսադրույքները:

21.1.1.1. Հաստատուն տոկոսադրույքով	
- ՀՀ դրամով	16-18% տարեկան տոկոսադրույքով
- ԱՄՆ դոլարով	13-15% տարեկան տոկոսադրույքով
- եվրոյով, ՌԴ ռուբլով	11-14% տարեկան տոկոսադրույքով
21.1.1.2. Լողացող տոկոսադրույքով (չի փոփոխվում մինչև վարկի գործողության առաջին 36-րդ ամսվան հաջորդող փետրվար կամ օգոստոս ամիսը)	
- ՀՀ դրամով	14.5% տարեկան տոկոսադրույքով
- ԱՄՆ դոլարով	12% տարեկան տոկոսադրույքով
- եվրոյով	10% տարեկան տոկոսադրույքով
Լողացող տոկոսադրույքով ՀՀ դրամով վարկերի համար 36-րդ ամիսը լրանալուց հետո յուրաքանչյուր օգոստոս և փետրվար ամիսներին տարեկան անվանական լողացող տոկոսադրույքը սահմանվում է 8.3% տոկոսադրույքին գումարած 6 ամսվա համար նախատեսված պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության ցուցանիշը: (Հիմնական ցուցանիշ)[4], իսկ Հիմնական ցուցանիշի անհասանելի դառնալու և հաջորդ ժամանակահատվածի համար դրա հիման վրա լողացող տոկոսադրույքի սահմանման անհնարինության դեպքում՝ 8.3% տոկոսադրույքին գումարած ՀՀ ԿԲ կողմից ամսական պարբերականությամբ հրապարակվող՝ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների միջին տոկոսադրույք - 1% (Երկրորդային ցուցանիշ)[5]:	
Լողացող տոկոսադրույքով ԱՄՆ դոլարով վարկերի համար 36-րդ ամիսը լրանալուց հետո յուրաքանչյուր օգոստոս և փետրվար ամիսներին տարեկան անվանական լողացող տոկոսադրույքը սահմանվում է 10.6% գումարած 6 ամսվա համար նախատեսված ԱՄՆ դոլարի լիբոր տոկոսադրույքը (Հիմնական ցուցանիշ)[6], իսկ Հիմնական ցուցանիշի անհասանելի դառնալու և հաջորդ ժամանակահատվածի համար դրա հիման վրա լողացող տոկոսադրույքի սահմանման անհնարինության դեպքում՝ 10.6% գումարած 6 ամիս ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերություն + 0.5% (Երկրորդային ցուցանիշ)[7]:	
Լողացող տոկոսադրույքով Եվրոյով վարկերի համար 36-րդ ամիսը լրանալուց հետո յուրաքանչյուր օգոստոս և փետրվար ամիսներին տարեկան անվանական լողացող տոկոսադրույքը սահմանվում է 10.4% գումարած 6 ամսվա համար նախատեսված Եվրո լիբոր տոկոսադրույքը (Հիմնական ցուցանիշ)[8], իսկ Հիմնական ցուցանիշի անհասանելի դառնալու և հաջորդ ժամանակահատվածի համար դրա հիման վրա լողացող տոկոսադրույքի սահմանման անհնարինության դեպքում՝ 10.4% գումարած Եվրոպական փողի շուկայի ինստիտուտի կայքում հրապարակված 6-ամսյա եվրիբոր (Euribor) տոկոսադրույք (Երկրորդային ցուցանիշ)[9]:	
Լողացող տոկոսադրույքով անշարժ գույքի վերանորոգման հիփոթեքային վարկերի համար տարեկան անվանական լողացող տոկոսադրույքի առավելագույն և նվազագույն շեմ է սահմանվում Պայմանագրի կնքման պահին գործող տարեկան անվանական լողացող տոկոսադրույք +/- 4%:	
Անշարժ գույքի վերանորոգման հիփոթեքային վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով:	
21.1.2. Միայն երաշխավորությամբ (մինչև 36 ամիս ժամկետով)՝	

[4] Ընդ որում՝ փետրվար ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հունվարի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը ՀՀ կենտրոնական բանկի կայքում հրապարակված ցուցանիշը, իսկ օգոստոս ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հուլիսի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը ՀՀ կենտրոնական բանկի կայքում հրապարակված ցուցանիշը:

[5] Ընդ որում՝ փետրվար ամսվա համար հիմք է ընդունվում նախորդ տարվա սեպտեմբերին ՀՀ կենտրոնական բանկի կայքում հրապարակված ցուցանիշը, իսկ օգոստոս ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա մարտին ՀՀ կենտրոնական բանկի կայքում հրապարակված ցուցանիշը:

[6] Ընդ որում՝ փետրվար ամսին հիմք է ընդունվում այդ տարվա հունվարի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը Լոնդոնի ժամանակով ժամը 11:00-ին Ռոյթերս լրատվական գործակալության կողմից Վարկի արժույթի համար հրապարակված լիբոր տոկոսադրույքը՝ նախատեսված վեց ամսվա համար, իսկ օգոստոս ամսին հիմք է ընդունվում հուլիսի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը Լոնդոնի ժամանակով ժամը 11:00-ին Ռոյթերս լրատվական գործակալության կողմից Վարկի արժույթի համար հրապարակված լիբոր տոկոսադրույքը՝ նախատեսված վեց ամսվա համար:

[7] Ընդ որում, փետրվար ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հունվարի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրվա դրությամբ գործող ԱՄՆ դաշնային ֆոնդի տոկոսադրույքը, իսկ օգոստոս ամսվա համար հիմք է ընդունվում հուլիսի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրվա դրությամբ գործող ցուցանիշը:

[8] Ընդ որում՝ փետրվար ամսին հիմք է ընդունվում այդ տարվա հունվարի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը Լոնդոնի ժամանակով ժամը 11:00-ին Ռոյթերս լրատվական գործակալության կողմից Վարկի արժույթի համար հրապարակված լիբոր տոկոսադրույքը՝ նախատեսված վեց ամսվա համար, իսկ օգոստոս ամսին հիմք է ընդունվում հուլիսի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրը Լոնդոնի ժամանակով ժամը 11:00-ին Ռոյթերս լրատվական գործակալության կողմից Վարկի արժույթի համար հրապարակված լիբոր տոկոսադրույքը՝ նախատեսված վեց ամսվա համար:

[9] Ընդ որում, փետրվար ամսվա համար հիմք է ընդունվում այդ տարվա հունվարի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրվա դրությամբ գործող 6-ամսյա եվրիբոր (Euribor) տոկոսադրույքը, իսկ օգոստոս ամսվա համար հիմք է ընդունվում հուլիսի 1-ին նախորդող 2-րդ աշխատանքային օրվա դրությամբ գործող 6-ամսյա եվրիբոր (Euribor) տոկոսադրույքը:

- ՀՀ դրամով	18-20% տարեկան տոկոսադրույքով
- արտարժույթով	15-17% տարեկան տոկոսադրույքով
Անշարժ գույքի վերանորոգման հիփոթեքային վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%:	
21.2. Անշարժ գույքի ձեռքբերման (գնման) նպատակով հիփոթեքային վարկերը տրամադրվում են՝	
21.2.1. Հաստատուն տոկոսադրույքով	
- ՀՀ դրամով	12.5-13.5% տարեկան տոկոսադրույքով
- ԱՄՆ դոլարով	10.5-11.5% տարեկան տոկոսադրույքով
- եվրոյով	9-10% տարեկան տոկոսադրույքով
21.2.2. Լողացող տոկոսադրույքով (չի փոփոխվում հաստատուն տարիների ընթացքում).	

Հաստատուն տարիների թիվ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
1	10.5 %	8.0%	7.0 %
3	11.5 %	9.0 %	8.0 %

Լողացող տոկոսադրույքով ՀՀ դրամով վարկերի համար 12-րդ ամիսը (կամ 36-րդ ամիսը եթե վարկի հաստատուն տարիների թիվը 3 տարին է) լրանալուց հետո յուրաքանչյուր օգոստոս և փետրվար ամիսներին տարեկան անվանական լողացող տոկոսադրույքը սահմանվում է 5.3% տոկոսադրույքին գումարած 6 ամսվա համար նախատեսված պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության ցուցանիշը (Հիմնական ցուցանիշ)[4], իսկ Հիմնական ցուցանիշի անհասանելի դառնալու և հաջորդ ժամանակահատվածի համար դրա հիման վրա լողացող տոկոսադրույքի սահմանման անհնարինության դեպքում՝ 5.3% տոկոսադրույքին գումարած ՀՀ ԿԲ կողմից ամսական պարբերականությամբ հրապարակվող՝ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների միջին տոկոսադրույք -1% (Երկրորդային ցուցանիշ)[5]:

Լողացող տոկոսադրույքով ԱՄՆ դոլարով վարկերի համար 12-րդ ամիսը(կամ 36-րդ ամիսը եթե վարկի հաստատուն տարիների թիվը 3 տարին է) լրանալուց հետո յուրաքանչյուր օգոստոս և փետրվար ամիսներին տարեկան անվանական լողացող տոկոսադրույքը սահմանվում է 7.5% գումարած 6 ամսվա համար նախատեսված ԱՄՆ լիբոր տոկոսադրույքը (Հիմնական ցուցանիշ)[6], իսկ Հիմնական ցուցանիշի անհասանելի դառնալու և հաջորդ ժամանակահատվածի համար դրա հիման վրա լողացող տոկոսադրույքի սահմանման անհնարինության դեպքում՝ 7.5% գումարած 6 ամիս ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերություն +0.5% (Երկրորդային ցուցանիշ)[7]:

Լողացող տոկոսադրույքով Եվրոյով վարկերի համար 12-րդ ամիսը(կամ 36-րդ ամիսը եթե վարկի հաստատուն տարիների թիվը 3 տարին է) լրանալուց հետո յուրաքանչյուր օգոստոս և փետրվար ամիսներին տարեկան անվանական լողացող տոկոսադրույքը սահմանվում է 7.5% գումարած 6 ամսվա համար նախատեսված Եվրո լիբոր տոկոսադրույքը (Հիմնական ցուցանիշ)[8], իսկ Հիմնական ցուցանիշի անհասանելի դառնալու և հաջորդ ժամանակահատվածի համար դրա հիման վրա լողացող տոկոսադրույքի սահմանման անհնարինության դեպքում՝ 7.5% գումարած Եվրոպական փողի շուկայի ինստիտուտի կայքում հրապարակված 6-ամսյա եվրիբոր (Euribor) տոկոսադրույք (Երկրորդային ցուցանիշ)[9]:

Լողացող տոկոսադրույքով անշարժ գույքի ձեռքբերման (գնման) հիփոթեքային վարկերի համար տարեկան անվանական լողացող տոկոսադրույքի առավելագույն և նվազագույն չեմ է սահմանվում Պայմանագրի կնքման պահին գործող տարեկան անվանական լողացող տոկոսադրույք +/-4%:	

Անշարժ գույքի ձեռքբերման (գնման) հիփոթեքային վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով, կամ կարող է սահմանվել 0%՝ փոխարենը վարկի անվանական տոկոսադրույքին, իսկ լողացող տոկոսադրույքի դեպքում նաև հաստատուն բաղադրիչին կգումարվի 0.5%:	
22. «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» ծրագրի շրջանակներում անշարժ գույքի ձեռքբերման (գնման) նպատակով հիփոթեքային վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	
երկրորդային շուկայից բնակելի անշարժ գույքի ձեռքբերման (գնման) դեպքում.	7.5-8.5% տարեկան տոկոսադրույքով
առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) բնակելի անշարժ գույքի ձեռքբերման (գնման) դեպքում	7.5% տարեկան տոկոսադրույքով
«Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» ծրագրի շրջանակներում անշարժ գույքի ձեռքբերման (գնման) հիփոթեքային վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով, կամ կարող է սահմանվել 0%՝ փոխարենը վարկի անվանական տոկոսադրույքին կգումարվի 0.5%:	
23. «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ միջոցների հաշվին Անշարժ գույքի վերանորոգման հիփոթեքային վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով	12.8-15.8% տարեկան տոկոսադրույքով
«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ միջոցների հաշվին Անշարժ գույքի վերանորոգման նպատակով հիփոթեքային վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով:	
24. «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ միջոցների հաշվին Անշարժ գույքի ձեռքբերման (գնման) նպատակով հիփոթեքային վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով:	11-12% տարեկան տոկոսադրույքով
«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ միջոցների հաշվին Անշարժ գույքի ձեռքբերման (գնման) նպատակով հիփոթեքային վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով, կամ կարող է սահմանվել 0%՝ փոխարենը վարկի անվանական տոկոսադրույքին կգումարվի 0.5%:	
25. «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ միջոցների հաշվին «Բնակարանային ֆինանսավորում, 4-րդ փուլ» ծրագրի շրջանակներում էներգաարդյունավետ և մարզային անշարժ գույքի ձեռքբերման (գնման) նպատակով հիփոթեքային վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով	10% տարեկան տոկոսադրույքով
«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ միջոցների հաշվին «Բնակարանային ֆինանսավորում, 4-րդ փուլ» ծրագրի շրջանակներում էներգաարդյունավետ և մարզային անշարժ գույքի ձեռքբերման (գնման) նպատակով հիփոթեքային վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով, կամ կարող է սահմանվել 0%՝ փոխարենը վարկի անվանական տոկոսադրույքին կգումարվի 0.5%:	
26. «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ միջոցների հաշվին «Բնակարանային ֆինանսավորում, 4-րդ փուլ» ծրագրի շրջանակներում անշարժ գույքի էներգաարդյունավետ 5+ և մարզային վերանորոգման հիփոթեքային վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով:	11.8% տարեկան տոկոսադրույքով
«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ միջոցների հաշվին «Բնակարանային ֆինանսավորում, 4-րդ փուլ» ծրագրի շրջանակներում անշարժ գույքի էներգաարդյունավետ 5+ և մարզային վերանորոգման նպատակով հիփոթեքային վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 1%-ի չափով:	
27. «Ջերմ օջախ» վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով	13% տարեկան տոկոսադրույքով
«Ջերմ օջախ» վարկի համար վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով վարկի տրամադրման պահին հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ վարկի գումարի 3%-ի չափով:	
28. Ընթացիկ հաշվին սառեցված կամ ժամկետային ավանդում ներդրված, ամբողջությամբ դրամական միջոցներով ապահովված ավանդի գրավով սպառողական, սպառողական այլ վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով:	

- 12-ից 36 (ներառյալ) ամիս ժամկետով	վարկի ժամկետին համապատասխանող Դասական ավանդի տոկոսադրույք + 4%
- 37 ամսից մինչև 60 (ներառյալ) ամիսը ժամկետով	Դասական ավանդի 24 ամսից մինչև 36 (ներառյալ) ամիս ժամկետի համար սահմանված ավանդի տոկոսադրույք + 5%
Ամբողջությամբ դրամական միջոցներով ապահովված սպառողական այլ վարկերի և ավանդի գրավով սպառողական այլ վարկերի տրամադրման դեպքում վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով գանձվող միջնորդավճարը կազմում է վարկի գումարի 0.3%-ը, բայց ոչ պակաս, քան 2 000 ՀՀ դրամը:	
29. «ԱՊԱՌԻԿ ՏԵՂՈՒՄ» վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով՝	0-21% տարեկան տոկոսադրույքով
29.1. «ԱՊԱՌԻԿ ՏԵՂՈՒՄ» վարկերի վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման նպատակով յուրաքանչյուր ամիս գանձվում է վարկի պայմանագրային գումարի 0-1% չափով միջնորդավճար (գանձումն իրականացվում է վարկի մարման գրաֆիկով նախատեսված ամսական մարումների հետ):	
30. Ընթացիկ հաշվին սառեցված կամ ժամկետային ավանդում ներդրված, ամբողջությամբ դրամական միջոցներով ապահովված ավանդի գրավով ստանդարտ գյուղատնտեսական վարկերի տարեկան տոկոսադրույքը սահմանվում է վարկի տրամադրման պահին Դասական ժամկետային ավանդատեսակի՝ տրամադրվող վարկի ժամկետին համապատասխանող տոկոսադրույքից 4 տոկոսային կետով ավել, եթե վարկը և ներդրված միջոցները միևնույն արժույթով են, իսկ եթե դրամական միջոցների և տրամադրվող վարկի արժույթները տարբեր են, ապա տարեկան տոկոսադրույքը սահմանվում է դրամային Դասական ժամկետային ավանդատեսակի՝ տրամադրվող վարկի ժամկետին համապատասխանող տոկոսադրույքից 6 տոկոսային կետով ավել: Ընդ որում, եթե տրամադրվող վարկի ժամկետին համապատասխանող դրամային ավանդի տոկոսադրույքը ցածր է գործող ավանդի տոկոսադրույքից, ապա վարկի տարեկան տոկոսադրույքը սահմանվում է գործող ավանդի տոկոսադրույքից 4 տոկոսային կետով ավել (եթե վարկը և ներդրված միջոցները միևնույն արժույթով են), կամ գործող ավանդի տոկոսադրույքից 6 տոկոսային կետով ավել (եթե վարկը և ներդրված միջոցները տարբեր արժույթով են):	
31. Եթե վարկը և հաշվարկված տոկոսագումարները ժամկետից շուտ ամբողջությամբ մարելիս արդեն իսկ վճարված և մարման պահին հաշվարկված տոկոսագումարների հանրագումարը պակաս է առաջին 3 ամիսների համար սահմանված տոկոսագումարից, ապա գանձվում է նաև այդ տարբերության չափով տոկոսագումար: Սույն կետի դրույթները չեն տարածվում՝ - Սակագների 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված՝ 5 000 000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը չգերազանցող գումարով ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրված վարկերի վրա - Սակագների 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 28-րդ կետերում նշված՝ 15 000 000 ՀՀ դրամը չգերազանցող գումարով վարկերի վրա - Սակագների 1-ին, 7-րդ, 27-րդ, 32-րդ և 33-րդ կետերում նշված վարկերի վրա	
32. Ֆիզիկական անձանց տրամադրված 5 000 000 ՀՀ դրամը, 10 000 ԱՄՆ դոլարը և 500 000 ՌԴ ռուբլին գերազանցող պայմանագրային գումարով Ստանդարտ գյուղատնտեսական վարկերը կարող են մարվել պայմանագրային ժամկետներից շուտ, որի դեպքում հաճախորդը վճարում է վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարը: Այն դեպքում, երբ վարկի մարման գրաֆիկով սահմանված հերթական մարումների միջև ընկած ժամանակահատվածում (գրաֆիկով սահմանված նախորդ մարման օրվան հաջորդող օրվանից մինչև հերթական վճարման օրը ներառյալ) կատարված մարումների հանրագումարը գերազանցում է գրաֆիկով սահմանված հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարը (մայր գումար և տոկոսագումար), ապա հաճախորդը վճարում է նաև գրաֆիկով սահմանված հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարը (մայր գումար և տոկոսագումար) գերազանցող մասի 0-3 տոկոսը:	

33. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրված վարկերը կարող են մարվել պայմանագրային ժամկետներից շուտ, որի դեպքում հաճախորդը վճարում է վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարը: Այն դեպքում, երբ վարկի մարման գրաֆիկով սահմանված հերթական մարումների միջև ընկած ժամանակահատվածում (գրաֆիկով սահմանված նախորդ մարման օրվան հաջորդող օրվանից մինչև հերթական վճարման օրը ներառյալ) կատարված մարումների հանրագումարը գերազանցում է գրաֆիկով սահմանված հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարի (մայր գումար և տոկոսագումար) կրկնապատիկը, ապա հաճախորդը վճարում է նաև գրաֆիկով սահմանված հերթական վճարման ենթակա ընդհանուր գումարի (մայր գումար և տոկոսագումար) կրկնապատիկը գերազանցող մասի 0-5 տոկոսը: Բացառություն են կազմում «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված գերփոքր առևտրային կազմակերպու-թյուններին տրամադրվող մինչև 5 000 000 ՀՀ դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով վարկերը, ինչպես նաև գերփոքր անհատ ձեռնարկատերերին տրամադրվող մինչև 5 000 000 ՀՀ դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով Բիզնես վարկերը և Էքսպրես բիզնես վարկերը, որոնց պայմանագրային ժամկետից շուտ մարման դեպքում գանձվում է միայն վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարը:	
34. Անշարժ գույքի վերանորոգման (վերակառուցման), անշարժ գույքի ձեռքբերման (գնման) բոլոր տեսակի հիփոթեքային վարկերը կարող են մարվել պայմանագրային ժամկետից շուտ, որի դեպքում, հաճախորդը վճարում է վարկի փաստացի ժամկետի համար հաշվարկված տոկոսագումարը, ինչպես նաև՝ միանվագ տուգանք հետևյալ չափերով. • առաջին տարվա ընթացքում վաղաժամկետ մարում կատարելու դեպքում՝ տվյալ պայմանագրային տարվա համար մարման ենթակա վարկի մայր գումարից ավել վճարված գումարի 0.6 տոկոսի չափով, • երկրորդ տարվա ընթացքում վաղաժամկետ մարում կատարելու դեպքում՝ տվյալ պայմանագրային տարվա համար մարման ենթակա վարկի մայր գումարից ավել վճարված գումարի 0.4 տոկոսի չափով, • երրորդ տարվա ընթացքում վաղաժամկետ մարում կատարելու դեպքում՝ տվյալ պայմանագրային տարվա համար մարման ենթակա վարկի մայր գումարից ավել վճարված գումարի 0.2 տոկոսի չափով, իսկ պայմանագրի գործողության մնացած ժամանակահատվածում վաղաժամկետ մարում կատարելու դեպքում՝ որևէ տուգանք չի գանձվում: Ընդ որում, պայմանագրային տարի է համարվում պայմանագրի կնքման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածը:	
35. Այն դեպքում, երբ Սակագներում սահմանված վարկային տոկոսադրույքները գերազանցում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային տոկոսադրույքի կրկնապատիկը, ապա վարկերը տրամադրվում են ՀՀ կենտրոնական բանկի հաշվարկային տոկոսադրույքի կրկնապատիկով:	
36. Տրանսպորտային միջոցի կամ գյուղատնտեսական այլ նշանակության տեխնիկայի գրավով ապահովված վարկերի, օվերդրաֆտների, Բիզնես վարկային գծերի, ակրեդիտիվների, բանկային երաշխիքների և ֆակտորինգների տրամադրման ժամանակ, վարկի տրամադրման պահին գանձվում է փաստաթղթավորման միջնորդավճար՝ 5 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ), յուրաքանչյուր գրավի պայմանագրի համար: Սույն կետը չի տարածվում ուսման վարկերի վրա:	
37. Ոսկու գրավով ապահովված վարկը մարելուց հետո, եթե գրավականը մնում է Բանկում, ապա այն ձևակերպվում է որպես ի պահ ընդունված արժեք և հետագայում հաճախորդից գանձվում է արժեքների պահպանության վարձ՝ յուրաքանչյուր լրիվ ամսվա համար գնահատված արժեքի 0.5%-ի չափով (ներառյալ՝ ԱԱՀ):	
38. Գործող պարտավորության(ների) ապահովման միջոցի փոփոխման դեպքում (գրավի հանում, փոխարինում և այլն) գանձվում է միջնորդավճար պարտավորության(ների) ապահովման յուրաքանչյուր փոփոխվող միջոցի համար 10 000 ՀՀ դրամի (ներառյալ՝ ԱԱՀ) չափով: Ընդ որում՝ պարտավորության(ների) ապահովման միջոց ավելացնելու դեպքում միջնորդավճար չի գանձվում:	

38.1. Գործող պարտավորության ապահովման միջոցի գնահատված արժեքի վերագնահատում (ավելացում) (բացառությամբ ոսկու գնահատված արժեքի վերագնահատման, որի վերագնահատումը կատարվում է անվճար):	10 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
38.2. Գործող պարտավորության ապահովման միջոցի գնահատված արժեքի վերագնահատում (նվազում)	անվճար
38.3. Հաճախորդի դիմումի համաձայն գործող պարտավորության(ների) ապահովման միջոցի, ինչպես նաև ապագայում ծագելիք պարտավորության(ների) ապահովման միջոցի տվյալ(ներ)ի փոփոխման դեպքում (տեխ. անձնագրի, սեփականության վկայականի տվյալների, սեփականատիրոջ(երի) փոփոխություններ և այլն) փոփոխման թույլտվության վերաբերյալ գրության տրամադրման պահին գանձվում է միջնորդավճար պարտավորության(ների) յուրաքանչյուր ապահովման միջոցի տվյալ(ներ)ի փոփոխման համար 5 000 ՀՀ դրամի չափով:	
38.4. Հաճախորդի դիմումի համաձայն վարկի (բացառությամբ լոմբարդային վարկերի) վերջնաժամկետի երկարաձգման դեպքում միանվագ գանձվում է միջնորդավճար երկարաձգված ժամանակահատվածի համար (երկարաձգված վերջնաժամկետ և պայմանագրային վերջնաժամկետի տարբերություն), որը հաշվարկվում է փոփոխության օրվա դրությամբ մայր գումարի (կապիտալի) մնացորդի նկատմամբ:	միանվագ 0.5% տարեկան հաշվարկով
38.5. Հաճախորդի դիմումի համաձայն 2 000 000 ՀՀ դրամ պայմանագրային գումարը գերազանցող վարկերի (բացառությամբ՝ լոմբարդային վարկերի) մարման գրաֆիկի փոփոխություններ (բացառությամբ՝ Սակագնի 38.4. և 38.6 կետում նշված դեպքերի և վարկի տոկոսադրույքի փոփոխման արդյունքում վարկի մարման գրաֆիկի փոփոխման դեպքի):	50 000 ՀՀ դրամ
38.6. Հիփոթեքային վարկերի վաղաժամկետ մարմամբ պայմանավորված մարման գրաֆիկի փոփոխություն, բացառությամբ՝ «Միայն երաշխավորությամբ անշարժ գույքի վերանորոգման հիփոթեքային վարկերի» և «Ջերմ օջախ» վարկերի: Սույն կետի մասով փոփոխություններ են համարվում, երբ վաղաժամկետ մարված գումարին համամասնորեն նվազեցվում է մինչև վարկի ավարտը մնացած բոլոր ամսական վճարումների չափը՝ վարկի մարման ժամկետը թողնելով անփոփոխ, կամ նվազեցվում է վարկի մարման ժամկետը՝ ամսական վճարումների չափը թողնելով անփոփոխ:	անվճար
39. e-cadastre.am կայքով Կադաստրի կոմիտե ներկայացվող էլեկտրոնային դիմումների միջնորդավճարներ[10]	
39.1. Իրավունքի դադարման պետական գրանցում	անվճար
39.2. Միասնական տեղեկանքի տրամադրում	1 000 ՀՀ դրամ
39.3. Իրավունքի պետական գրանցում, այդ թվում	
- Գրավի վկայականի տրամադրում	1 500 ՀՀ դրամ
- Սեփականության վկայականի տրամադրում (Անշարժ գույքի գնման հիփոթեքային վարկերի դեպքում)	1 500 ՀՀ դրամ
39.4. Այլ տեղեկատվության տրամադրում	1 000 ՀՀ դրամ

[10] Բոլոր միջնորդավճարները ներառում են ԱԱՀ-ն:
Բացի նշված միջնորդավճարից, հաճախորդը պետք է վճարի նաև ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից սահմանված վճարները և պետ. տուրքերը: